ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 065

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 20 ՄԱՅԻՍԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 8 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին *որոշում է.*

Հաստատել Արենի համայնքի ավագանու 20-ը մայիսի 2021 թվականի թիվ 8 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1. Արենի համայնքի ավագանու 20.05.2021 թվականի թիվ 8 նիստի օրակարգը հաստատելու մասին

2. Արենի համայնքի ավագանու 30.04.2021թվականի թիվ 056 և 16.04.2021թվականի թիվ 043 որոշումների մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելուն համաձայնություն տալու մասին

3. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող Արենի բնակավայրի նախկին համայնքապետարանի շենքի 2-րդ հարկից 68.4 քմ ընդհանուր մակերեսով տարածքը Մանկական զարգացման հիմնադրամին անվարձահատույց հատկացնելուն և շինության վերանորոգման համար ներդրվելիք գումարի չափը հաստատելուն համաձայնություն տալու մասին:

4. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի ՍՆՏՋ ԼՖ (սոցիալական ներդրումների և տեղական զարգացման լրացուցիչ ֆինանսավորում) ծրագրի բաղադրիչ 2-ի մեկնարկի համար նախաձեռնող խմբի կազմը հաստատելու մասին:

5. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերից աճուրդ-վաճառքով օտարելուն համաձայնություն տալու մասին:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ